

ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին Կ. Պոլսոյ համ. 10 Մհն.
Գաւառացի . . . 2 1/2
Վեցամս. . . Կ. Պոլսոյ . . . 5 Մհն.
Գաւառացի . . . 1 1/2
Օտար երկիրներու . . . 50 Ֆր.
Ծանուցման տողը մէկ անգամի հա-
մար 3 զուրուշէր երկու անգամի հա-
մար 2 զուշէ. աւելի անգամներու
համար զատ սակարկութիւն կը-
լայ :
Իւրաքանչիւր թիւ 40 վարա արծ :



ԼՐԱԳԻՐ

ՀԱՆԱՊԱԶՕՐԵԱՅ

ՊԱՅՄԱՆՔ

Դուրս գնացած իրաւունք ճանրու-
ած արժէքը խմբագրութեան վրայ է :
Լրագրոյ վերաբերեալ նամակ
կամ որ և բոլոր գրութիւն խմբագրի-
— Տնօրէնին պիտի ուղարկուի , զայս-
միտ Ստանբուլ քաղաքի թիւ
198 , Նորոտան , Ստամբուլ գրասեն-
եակը :
Ճանրուած արժէքը ճանրուած նա-
մակ չընդունուի :
Չարտուած նամակ , յողում , կը
ևս չեն տրուիր :

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 28 ՅՈՒՆԻՍ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Լորտ Պիքոնսֆիլիտ իւր տարեկան
ճառը խօսեցաւ Լոնտոնայի քաղաքա-
պետական կոնգրէսին մէջ , և յայտա-
բարեց թէ Ռուսիոյ կայսրը պատուա-
ւոր կերպիւ գործադրեց Պէրլինի
գաղտնագիրը , թէ Վեհ. Սուլթանը կը
մեղադրուէր գաղտնագրին գործադ-
րութիւնը յապաղելու համար , բայց
պէտք է նկատողութեան առնուլ որ
գաղտնագիրը կը ճանաչուի 'ի վեր թուր-
քիա ծանր դժուարութեանց ենթա-
կայ է : Այս ատենախօսութիւնը միան-
գամայն նպաստաւոր է թէ՛ Ռուսիոյ
և թէ՛ թուրքիոյ , և հաշտութեան
ամրապնդումը կը հաստատուի : Դու-
ռը Գաղղիոյ և Անգղիոյ կառավարու-
թեանց ամեն ապահովութիւններ
տուած է թէ խոստացեալ բարենո-
րոգմանց երմտականի և ոստիկանու-
թեան վերաբերեալ մասերն ընդհուպ
պիտի գործադրին : Այս կերպիւ մեծ
խնդիր մը լուծում կընդունին , և բա-
րենորոգմանց անգործադրութեան
պատճառաւ Եւրոպիոյ մէջ ելած ա-
ղաղակը կընայ նուազելու :

Նախորդ Միւր-Եսպարքոս խոյ-
րէտոսին փաշայի ծրագրին մերժուի-
լէն և իւր անկումն 'ի սկզբն լաւ
ապահովութիւն չէր ըրած Եւրոպիոյ
մէջ , սակայն հասարակաց կարծիքն
հիմա այս փոփոխութիւնն աւելի հան-
գարտ կերպիւ գատել սկսած է :
Թայմի լրագիրը կը խոստովանի թէ
խոյրէտոսին փաշայն իբր թուրքի-
քի և օտարական Կ. Պոլսոյ պաշտօնա-
կան կենաց վարժուած չէր , այս պատ-
ճառաւ չկրցաւ յաջողիլ : Այսին ա-
մենայնիւ Եւրոպական մտաց վրայ
ապահովութիւն մը կը մնայ միշտ թէ
թուրքիոյ մէջ Եւրոպական գաղափա-
րաց մուտ գտնելն անկարելի է : Թա-
նի նման լուրջ թերթեր աւելի բըռ-
նելով որ խոյրէտոսին փաշայի ծրա-
գիրն իւրեանցից ժողովի մը ներկայա-
ցեր և չէր ընդունուեր , կը յայտա-
բարեն թէ թուրքիա կրօնական տէ-
րութիւն մ'է , որ կրօնական օրինօք
միայն կը կառավարի : Բայց այս լու-
րը թերեւս սխալ լինի , քանզի պաշ-
տօնապէս հրատարակուած էր թէ
իւրեանցից ժողովն իւրեանցից կարգին
մէջ պէտք եղած բարենորոգմանց
վրայ կարգելու համար գումարուած
էր : Բարենորոգմանց պատճառաւ
օտար տէրութեանց կողմէ Բ. Դրան
վրայ եղած ճնշումը քանի մը վնասա-
կար կողմեր ունի , քանզի թուրքիա
կընայ կարծել որ Եւրոպայ թշնամա-
կան դիտաւորութեամբ միայն ղեկը
նետել կուղէ : Բարձր. Սաֆվէթ փա-
շան Վիեննայէն անցած ժամանակ
Նայե ֆրայէ Բրէսէ լրագրին խմբագ-

ԲԱՐԵՆՈՐՈՂՄՈՒՆՔ Ի ԹՈՒՐԿԻԱ

Արեւելահայկ. Անգլ. Եւր. Եւր. Եւր.
Ժողով. Եւր. 22 Եւր.
(Շար. տես թիւ 2386)

ՍԵՐ Հ. ՏՐԵՄԵՐՆՏ ՈՒՅԻՆ Իւր
բանախօսութիւնը շարունակելով Մա-
կեդոնիոյ մէջ Պուլղարաց կողմանէ
իպամաց վրայ եղած խժժութեանց
դէպքերը կը յիշէ , զորս իւր քարտու-
ղարն և Թայմի Կ. Պոլսոյ թղթակից
Պ. Մաքէնզի Ուօլթս , որ բնաւ թուր-
քասէր մը չէ , իրենց տեղեկագրոց մէջ
հաստատած են : Բայց պատերազմի
և խռովութեանց ժամանակ այսպիսի
դէպքեր կրնան պատահիլ , ուստի ինք
շատ չպնդեր անոնց վրայ : Եւրոպական
յանձնարարին նպատակն էր Սրեւել-
եան Բուսթիլի մէջ իրաց այնպիսի վի-
ճակ մը հաստատել , որ աղքատ միջ-
այս կերպ թշնամութեանց առաջն
առնուի : ՍԵՐ Հ. Տ. Ուօլթս համազու-
ած է որ այսպէս պիտի կրնայ լինիլ : ՍԵ-
ր Հ. Սրեւելեան Բուսթիլի քանի մը կող-
մերը թուրքերն և Պուլղարք բարե-
կամական յարաբերութիւններ ունին ,
և մեծ յոյս կայ որ երկիրն ինքզինք
վերստին երկրագործութեան և ա-
ւելուորի տուած ժամանակ , երկու
ժողովուրդը պիտի կրնան լաւ ապ-
րիլ միմեանց հետ : ՍԵՐ Հ. Տ. Ուօլթս
թուրքական խժժութեանց դոյու-
թիւնը չուրանար , բայց պէտք է ,
կըսէ , ճանչնալ թէ միւս կողմէն , այ-
սինքն Պուլղարաց կողմանէ ալ խժ-
ժութեանք տեղի ունեցած են :

Պատ. երեսփոխանն Հելլենական
խմբոյն վրայ քանի մը բառ միայն
կըսէ , և կը յայտնէ թէ թուրքիոյ ար-
դի ժժութեամբութեանց մին ալ Յունաս-
տանի հետ պատերազմի մը հաստա-
կանութիւնն է : Տակաւին ուրիշ խըն-
դիրներ կան Եւրոպայի թեան կա-
րօս , և ՍԵՐ Հ. Տ. Ուօլթս կը յայտնայ
թէ խոյրէտոսին փաշայն , որ ազատ
և լուսաւոր գաղափարաց տէր անձ
մ'է , պաշտօնի վրայ մնալը գոհացու-
ցիչ կարգադրութիւն մը յառաջ պի-
տի բերէ :

ՍԵՐ Հ. Տ. Ուօլթս իւր մասին թուր-
քական պետութեան պահպանութեա-
նը կը փափաքի , բայց համոզուած է
որ այս բանը կատարեալ տարակեդ-
րոնացման գրութեամբ մը կարելի է :
Կ. Պոլսոյ մէջ կառավարական գոր-
ծերը սարսափելի վիճակ մ'ունին , և
պատուարժան երեսփոխանը կը յայտ-
նէ թէ միայն իւր գիտցած զոչարա-
զութեան դէպքերը մի առ մի յիշել
անհնար է , և կը բաւականանայ մէկ
երկու օրինակ տալով : Ամեն մարդ
գիտէ թէ Եւրոպէն եկող վաճառաց
արժէքին վրայ 100 ին 8 մարտ կառ-
նուի թուրքիոյ մէջ : ՍԵՐ Հ. Տ. Ու-
օլթս մէկ բարեկամն 800 ոսկւոյ վա-
ճառը կը բերէ Կ. Պոլսոյ , և կուղէ

որ անտուկներն ոչ թէ մաքսատնն
այլ իւր տան մէջ բացուին : Ուստի
մաքսատան մէջ վաճառքին գինը կը
յայտնէ , և 100 ին 8ի հաշուով , 800
ոսկւոյ վաճառքին համար 64 ոսկի
կը հանէ կուտայ և միանգամայն մաք-
սատան պաշտօնէին ծախուց փոխա-
րէն մասնաւոր գումար մ'ալ կը վճա-
րէ : Բայց այս պարզ գործողութիւնն
հաճելի չի լուր մաքսատան պաշտօ-
նէին , որ չընդունիր յիշեալ անձին
հաշիւը , մինչև որ միջնորդ մը գործին
մէջ մաներով , միայն 8 ոսկի մաքս կը
հաշուէ և մնացած 56 ոսկին պաշտօ-
նէից կոկորդը կանցնի իբրեւ կաշառք :
(Տոկէ Եւր. Եւր. Եւր. Եւր. Եւր.) Ժո-
ղովուրդն այսպէս վճարած 25 միլիոն տուր-
քէն հաղիւ թէ 12 միլիոն տէրու-
թեան գանձը կը մանէ , և այսպէս
երկիրն աղքատացած է՝ երմտական վի-
ճակը բարւոքելու համար առաջ երկ-
նային օգնութեան կարօտ լինելու :
Եթէ միայն ներկայ կարգադրութիւնը
պարկեշտաբար 'ի գործ դրուին , հա-
սոյթն իւր ճիշդ գումարին կրնայ
հասնիլ : Թուրքիոյ երեսփոխանը կը
կրտելու համար ամեն ձեռնարկ ե-
ղաւ : Պ. տը Թուրքիոյ առաջարկութիւն
մ'ըրաւ , որ անյաշող եղաւ , յետոյ
Օսմ. Պանքան ծրագրի մը ներկայացր
որուն համեմատ երկիրն պիտի պի-
տի հոգար : Պանքան 6 միլիոն ոսկի
կառավարիլ , որ զինուց ներքեւ գը-
նուող զօրքերն իրենց տունները դըր-
կելու և թղթագրումը չընթարկուի-
նէ վերցնելու պիտի գործածուէր :
Բայց այս առաջարկութիւնն աւելի
միասակար էր քան թէ օգտակար ,
որովհետեւ ժամանակաւոր օգնութիւն
մ'էր , և յից ամիս ետքը գործերն
աւելի գէշ պիտի լինէին , մինչդեռ
թուրք կառավարութեան պարտքն է
ինդիւստրիալ ճիւղի մը լուծել , և այնպի-
սի բարենորոգումներ ընել որոց ար-
դիւնքը ոչ թէ վրայ ամսուան՝ այլ
բազմամիլ տարիներու համար լինի-
նէ (Մոկէ Եւր. Եւր. Եւր. Եւր.) Այսպիսի բա-
րենորոգումներ ալ միայն տարակեդ-
րոնացման գրութեամբ կարելի են :
Բայց եթէ յառի կառավարութիւն
կայ մայրաքաղաքին մէջ , հապա ո՞ր-
չափ յոռի կառավարութիւն պէտք է
լինի գաւառացի մէջ : Այնպիսի ան-
ձինք կան , որք քաղաք բաներ կը մար-
դարէանան թուրքական իշխանու-
թեանց համար , կը ջանան զանոնք
իրենց հին կացութեան մէջ պահել ,
և կըսեն թէ Անգղիա անոնց օգնու-
թեան պէտք է դադ . բայց պէտք է
ըսել որ անոնք թէ իրենք իրենց պար-
տին օգնել : (Մոկէ Եւր. Եւր. Եւր. Եւր.)

Յետոյ Պ. Կլաւսթրոն խօսք կառ-
նուելու գէտ Պ. Համպուրի և 'ի պաշա-
պանութիւն ՍԵՐ Զարլը Տիւրք առա-
ջարկութեան :

Հետեւելու

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐՆԵՐ

Վոստրա 7 օգոստոս.
Լորտ Պիքոնիկիտ երկէ Լոնտրայի
քաղաքայեան տաւած կոշտըին մէջ եր-
կար բանախօսութիւն մ'ըրու :

Արտաքին աշխարհագրութեան վրայ
խօսելով ըստ թէ Պիքոնիկի զաշտադիրը
գործադրուելու վրայ է և թէ ջարդ բու-
լը մեծ աշտադրութեանց հետ համաձայն է
խաղաղութիւնը պահպանելու համար :
Առաջին նախարարը կընդունի թէ ծա-
ղած դժուարութիւնը թուրքիոյ մէջ բա-
րենորդմանց գործադրութիւնը կըցած
են յապաղել : Բայց, կըսէ Լորտ Պիքոնի-
կիտ, Դուք Պիքոնիկի զաշտադրին աքրա-
մադրութեանց և ոչ մին կուզէ փոխել,
որուն երաշխաւորութիւնը ու պայման-
ները բաւական են ամեն պատահակա-
նութեանց դէմ :

Այդատանայ պատերազմին վրայ
խօսելով, Լորտ Պիքոնիկիտ ըստ թէ
կառավարութիւնը իւր նպատակին հա-
ստ, ըստ որում ռազմադիտական սահ-
մանադրուելու ձեռք բերուեցու և կար-
գադրեցու :

Չուրաներուն դէմ եղած պատերազ-
մին զաւով, Լորտ Պիքոնիկիտ ըստ թէ
կառավարութիւնը բոլոր խնդրոց լուծ-
ման լուրին կապած վայրկեան վայրկեանն

Լոնտրա 8 օգոստոս.
Բարեյոսոյ հրահանգներն եկած վեր-
ջին լուրերը կը ծանուցանեն թէ ընդհա-
նուր հրահանատար Սըր Պարնէթ Ուոլթի
չորսուած քուրեր է Չուրանայ Ու-
լուտի մայրաքաղաքը վերստին գրաւել
Անգլիական զօրքով :

Փարիզ 8 օգոստոս
Նուպար փաշային արտօնութիւն տըր-
ւեցաւ տարւոյս վերջին առաջ Եգիպտոս
վերադառնալու :

Լոնտրա 8 օգոստոս
Երեսօրհանաց ժողովն Եգիպտական
խնդրոյն վրայ պիտի փնտրանի յառա-
կայ շարժում :

Այս օրը հետո հետաքննել

Սօֆիա 9 օգոստոս.
Պուլաւիոյ կառավարութիւնը յայ-
տարարութիւն մ'ուղղեց առ ազգն, յո-
րում օրինաց գործադրութեան, ներքին
անդորրութեան և օտար տէրութեանց
հետ համակրական յարաբերութեանց
վրայ կը խօսի :

Լոնտրա 8 օգոստոս.

Երեք օրը.	41 1/4
Փոխ.	4865 4 1/2
»	4869 13 4/2
»	4871 54 4/2
»	4872 24 4/4
»	4873 12 5/8
» Եգիպտոս.	71 5/8
Անգլ. փոխ.	97 3/4

Փարիզ 8 օգոստոս.
Օտ. փոխ. 11.40

Դադլ. փոխ.	50/0	32.57 1/4
»	»	84.45
»	»	116.40

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Յնչալէս որ արդէն ծանուցինք,
արքունեաց տաւջին քարտուղար Ալի
Ֆուատ պէյ Եգիպտոսի իրաւով թէվ-
ֆիզ փաշային հաստատութեան հը-
րովարտան աւելով երէկ Եգիպտոս
ուղեորեցաւ կայսերական խղճատին
չոգենաւով : Վսեմ. Արքայազամ փա-
շան և Բ. Դրան կողմանէ ալ գիւա-
նադատական գործոց (մուհիմմէ)
անօրէն Մէֆէրեան Նշան Էֆէնտին
ընկերակցած են Ալի Ֆուատ պէյին :

Փարիզի լրագիրը կը կարծեն թէ
Վիեննայի նախորդ դեսպան Լաստ
պէյ Փարիզի դեսպան պիտի անուա-
նի Բարձր. Սալֆէթ փաշայի տեղ :

Օսմանեան նաւատորմին վրայ այս
օրերս նոր ֆրեգատն մ'ալ աւելցաւ.
Մէհմետ Մէլիմ անուն՝ որ Նիկոմի-
դիոյ նաւարանը շինուած էր և եր-
կուշարթի օրը ծովն իջաւ :

Հնդկաբթի օրը մայրաքաղաքս
եկած Եգիպտական Ֆայում թղթա-
սար չոգենաւը Նաթուլի զրկուեցաւ
նախորդ թաղի խմայիլ փաշային տը-
րամադրութեանը ներքե զանուելու :

Սպարապետի դուռն այս շաբ-
թու վերստին խոյր թնդանօթներ
զրկեց Չաթալայի ամրութիւնները :

Վերջին օրերս Պաշ-պօղուգներու
հրոսանումներ Արեւելեան Բուսիլի
սահմանադրութեան ներս արշաւեր և
քանի մը զիւղերու բնակիչք փախա-
լով՝ տուներնին տեղերնին թողեր
փախեր են : Մինչև անգամ նախան-
գին ոստիկանութեան հրամանատա-
րին զրկուած բողոքադիր մը կըսէ
թէ կանոնաւոր զօրաց խումբ մ'Ա-
րեւելեան Բուսիլի գիւղ մը մանելով
պահապաններուն զէնքն առեր և
հարցուցեր է թէ Արեւելեան Բուսի-
լի մէջ շատ զօրք կ'ալ և ո՞ւր կը կե-
նան :

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ԵՍԶԱՄԵՐ ՈՒՄՈՒՄԻԷ	
Երէկ իրիկուն գոյուեցաւ	42.49
Այս առաւօտ բացուեցաւ	42.45
Կէս օրին	42.15
Բուսիլի երկաթուղի	Փր. 43.25
Թղթադրամ	Լր. 892 26

Երկու են ձիւք օրով թարգմա-
նի մը կընայ պարծենալ. ճշգու-
թիւն բնագրին իմաստից դարձուա-
ծոց և բառից նկատմամբ, և մաք-
րութիւն իւր գործածած լեզուին նը-
կատմամբ : Կարապետ Էֆէնտի այդ-
երկու ձիւք մէջ ալ մեծ յաջողակու-
թիւն յայտնած է : Մէկդ թողլով
յիշատակեալ քերթուածոց ընտրու-
թեան մէջ ցուցուցած ճաշակը, հի-
անալի ճշգրտութիւն մը պահած է բը-
նագրին նկատմամբ, մինչև հար իսկ
է լսել թէ որչափ բառ կայ բնագը-
րին մէջ՝ նոյնչափ ալ Հայ թարգմա-
նութեան համար գործածուած է, և
գործածուած բառերն ալ բառ-
գիրքի ճշգրտութեամբ բնագրին կը հա-
մապատասխանեն : Դիտեմ որ զանա-
զան անձինք ամենայն խոստովեամբ
քննութիւն մ'ուղեցին ընել, բայց
հազիւ թէ մէկ կամ երկու բառ լի-
բայ կըցան խորհրդածութիւնները
ընել, թէպէտ և այն մէկ երկու բա-
ռերն իսկ կընան նաեւ խիստ ճշգր-
տութեան պահանջութեանց առ-
ջև արդարանալ :

Այդչափ ճշգրտութեան գերի ըլ-
լալով հանգերձ՝ Կարապետ Էֆէնտի

ԸՆԹԱՑԻ ԴՐԱՄՈՑ

28 ցուլս		
Անգլ. փոխ.	109 28	
Նաթուլի փոխ.	87 26	
Խմբ. փոխ. օր.	90 2	
Դրեմից	51 20	
Մէհմետի տարբերութիւն	6 25	
Հինգնոց	49	
Մէթալիք	47 20	
Պղինձ	465	

Ա. Զ. Գ. Ս. Յ. Ի. Ն.

Հաճելի Պետրոս Եպիսկոպոսն
յուլիս 28 թուով Պատրիարքարան ե-
կած հեռագիր մը տեղւոյն գայմա-
գամին դէմ գառն գանդառներ
կ'ընէ : Միւթէսարքութեան տըր-
ւած աղերսագրեր ապարդիւն մնա-
ցած են՝ Հաճելի գայմագամի հարըս-
տահարողաց կողմը բռնած լինելուն
պատճառաւ : Գաւառական անտու-
կէն խօշանդոց վերցուցած 51.000
դրուշն Հայոց մէ առնելու համար բըռ-
նութիւն ի գործ կը դրուի : Գաղա-
քէն տուներնին ուրիշ տեղ փոխա-
գըրողաց առեւքը քաղաքին աղքատ
ժողովրդէն կը պահանջուի : Խումբ
խումբ զօրքեր փողոցներն արձակ-
ւած են և անտանելի բռնութիւններ
կը դործեն ժողովրդին վրայ : Հարըս-
տահարութեան դէպքեր խիստ բազ-
մացած են, և ամենուն ալ պատ-
ճառը գայմագամին յուսի ընթացքն
է : Պետրոս Եպիսկոպոս կը հաւատ-
տէ որ եթէ այս վիճակը շարունա-
կէ, Հաճելի Հայ ժողովրդը պիտի
ցրուի, ուստի անմիջական դարման
կը խնդրէ :

Տիվրիկի փոխ-առաջնորդէն Պա-
րիարքարան եկած հեռագիր մ'ալ
կը ծանուցանէ թէ տեղւոյն գայմա-
գամը Սանտրոք Էմինի Նիկոլոս Էֆէն-
տին ապօրէն կերպիւ դարմ ուղած
լինելով : այս վերջինը չուղեր տալ
ասոր վրայ գայմագամը սատիկ բար-
կանալով, իւր ձեռքին տակ գտնուող
Այան օղլու Գօյ անուն ժողովրդեան
ատելի անձի մը հրաման կ'ընէ յիշ-
եալ Նիկոլոս Էֆէնտին ծեծելու, ու
ըլլալ քիթէն բերնէն արիւն կուգայ,
և յետոյ բանտարկել կուտայ հաւա-
տարիմ Սանտրոք Էմինին փոխ-առաջ-
նորդն իրաւամբ կը բողոքէ այս բըռ-
նական գործին դէմ, որ ոչ միայն
Հայ անհատի մը վրայ անիրաւութիւն,
այլ նոյն իսկ տէրութեան ալ փասա-
կար է :

Կըցած է մաքուր Հայերէն մը գրել
և իւր թարգմանութիւններէն ոմանք՝
առանց բնագիրը տեսնելու կարդաց-
ւած առնել՝ կընան իրր աղքատին լեզ-
ւով դրուած հեղինակութիւն կար-
ծուի :

Թարգմանիչն այդ գործոյն մէջ
գրաբար լեզուն նախադասած է, իւր
որ կով գարձուածներով շատ ալ գիւ-
րութիւն կըցած է ընծայել իրեն, այլ
գժեղագրաբար իւր աշխատութիւնը
միայն ուսումնական անձանց վայե-
լելի կըցած է ընել : Իսկ աղգին մե-
ծամանութիւնն՝ որ աշխարհաբարով
կը կրթուի, չկրնար ամենեւին այդ հը-
րատարակութեան օգուտ մը քա-
ղել, Կերեկ թէ այդ երբը նախա-
տեսելով՝ նուազ թուով օրինակներ
ուղադրել տուած, և զայն ալ ուղ-
ղակի ինքն յարմար անձանց նուի-
րած է, մինչ բաղձալի էր որ դե-
ղեցիկն ճաշակն աղգին մէջ տարա-
ծելու օգուտը (վասն զի այս միայն
է քերթուածոց թարգմանութեանց
նպատակը), աւելի ևս ընդհանրա-
նայր, և աղգին ճաշակը կրթութիւն
Այլ թերեւ Կարապետ Էֆէնտի
կուղէ աւելի հեռուն նկատել, և

Մուշէն մեզ գրուած նամակ մը
կը ծանուցանէ թէ վսեմ հրաման
գնացեր է ի Մուշ, որ Բուսիլի ձեռ-
քըն անցած Օսմ. երկիրներէն գաղ-
թող երեք հազար երկու հարիւր իս-
լամ ընտանեաց բնակութեան տեղ
պատրաստեն : Մշոյ Մէհմետ ալ խոր-
հելով տեղեկադրեր է թէ հազար
երկու հարիւր ընտանիքէ աւելի պա-
տրաստուելու տեղ չկայ Մշոյ գաղտին
մէջ :

Մեծ. Տօքթօր Բ. Շիշմանեան է-
ֆէնտին, որ ժամանակէ մ'ի վեր Տըլի-
զիս էր, Էլմիսմին և Կարս հանգի-
պելով այս շարժում մայրաքաղաքս
հասաւ Կարնոյ ճանքով :

Տիվրիկի Մեղու Հայաստանի լը-
րագրին յուլիս 14 թուոյն մէջ հե-
տեւալը կը կարդամք :

Վարսից գրուած են թէ Անիի կա-
թողիկէ եկեղեցին նորոգելու համար
արդէն վեց անձինք հոգարարձու-
թեան անդամներ ընտրուած են,
Յոյս կայ որ այժմ Անիի եկեղեցին կը
շինուի և կը կազմուի պահապաների
խումբը :

Նոյն թերթին մէջ կը կարդամք
նաեւ հետեւեալը :

«Մեզ հաղորդում են որ Աղէք-
սանը քօպօլից 37 ընտանիք ցանկա-
նում են տեղափոխուի Անի և բընա-
կութիւն հաստատել : Տարակոյս չկայ
որ կառավարութեան կողմից ամէն
կերպ նպաստ կը լինի այդ ընտան-
եաց : »

Թ. Գ. ՔԱՆՑՈՒԹԻՆԷ ՄԱՍԻՍ ԼՐԱԿՐ ՈՅ

ՆԱՄԱԿ Ի ՌՈՒՍԱՍՏԱՆԷ

7 յուլիս 1879

... Խմբագրապետ « Մասիս » օրու
թերթի :

Ես իմ վերջին նամակումս գրել էի
որպէս նոր լուր որ ստացել էի առ ձեռն
— փողոցումս, թէ Մեծ. Պ. Ս. Մանուէն-
եանցը զնում է Հայաստանը ուսուցչա-
կան դպրոց բանալու : Այս անգամս կա-
տարում եմ իմ խոստումներս՝ հաստատ
աղբերակները հաւաքելով իմ տեղեկու-
թիւններս :

Նամա և առաջ, ասում են, այդ
միտքը՝ Գերմանիայումս մանկավարժու-
թիւն ուսած երիտասարդներին Հայաս-
տան ուղարկելու՝ ուսուցչական դպրոց
բանալու նպատակով, — վաղուցուց բան
է, աւելի լաւ, փառք և պատիւ այն ան-

նոյն իսկ գրաւար լեզուն բոլոր աղ-
գին ընտանիք ընել, և եթէ հնար է՝
աղգը այն կէտին առաջնորդել, որ
Աւետարանին գրաւար ժողովրդա-
կան լեզու մ'ըլլայ : Հնար է այդ նը-
պատակին հասնել, կան ոմանք՝ որք
կարելի կը դատեն, և այլը՝ որք հաս-
նելու կաշխատին : այլ ևս կարծեմ
թէ այն ընթացքով՝ զոր այսօր ու-
նիմք, և այն դատարարակութեամբ
զոր այժմ կուտամք, այդ նպատա-
կին հասնուի : և քանի որ այդ ու-
ճը ընդհանրացած է և աղգ այն կըր-
թութեան ալ յարմար և օգտակար է,
լուաղայն է այդ ուճոյն գործակցել :

Այսչափ ինչ ընդհանուր տեսու-
թեամբ միայն առեալ, ապա թէ ոչ
մեր գրաւարն ալ կայ և մնայ, կը
ծաղիկ և պիտի ծաղիկ, և օգուտա-
կար է որ այնպէս ալ ըլլայ, և շքեղ
և բարձր լեզու մըն ալ ունենամք :
Ահա վանքերն այդ ճանքով սկսան
գործել և կը գործեն : սակայն ար-
ժան է դիտել, որ իրենք ալ վերջա-
պէս աշխարհաբար լեզուն սկսան գոր-
ծածել, աղգին ընդհանրութեան և
դատարարակութեան սահմանաւոր
ուր մէջ :

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

ԵՐԱԿԱՔԱՂ ԹՕՏԱՐԱԶԳԻ ՔԵՐԹՈՂԱՅ

Ա.
Թարգմանեց Կարապետ Գարազալ. —
Կոստանդնուպոլիս. տպագրութիւն Պ.
Բերիւճեան 1879. — Երեսք 40 ութաճալ :

Մեր մատենագրական յօդուա-
ծոց մէջ փութադինք միշտ այն հը-
րատարակութեանց աւելի միտ դը-
նել որք աղգային հեղինակութիւնը
են, և գրեթէ որոշած էինք միայն
անոնց վրայ խօսել : Բայց առիթներ
կան որ թարգմանութիւնը ալ հե-
ղինակութեան արդիւնքն և գովես-
տը կընդունին, և այսպէս պէտք է
գատել Գարազալ Կարապետ Էֆէն-
տիի Ծաղկաքաղը :

Առ այժմ Ծաղկաքաղին միայն ա-
ռաջին մասն ունիմք, որ կը պարու-
նակէ իննետասն քերթուածոց, թարգ-
մանեալ 13ը Գարգիլերէնէ, հինգը Ի-
տալերէնէ և մին Գերմաներէնէ, զար-
գարուն տպագրութեամբ հրատա-
րակեալ՝ բնագրիներովը մէկ տեղ որ
կարծես թէ չօգտակելի ևս կընէ թարգ-
մանին արդիւնքը :

ձանց, որ 5-10 տարի սորանից առաջ հասկացել են այժմեան մեր ամենահարկաւոր պիտոյքը: Երանի այդ անձանց և միանգամայն նախանձելի դոյս գործերը, որ մեր հին լուսաւորիչները շարքու մըն պէտք է դասուին, նոցա նման գործերով և նոցա շարքով ընթանալով: Թէ պէտ ինձ հաղորդեցին այդ նշանաւոր և ազգանուէր անձանց անունները, բայց իմ կողմից անհամեստութիւն կը լինէր, իմ անունն ծածկելով, — նոցա անունը մէջդան հանելի այժմ: Գործը ձեռաց իրենանց փառաւոր արասցեն դանդախանոց: Ահա՛ բանն ինչ է: Պ. Սեդրակ Մանտենեանցը, վերոյիշեալ Պարոնի ծախսով, — որի անունը վաղուց ծանօթ է և Տաճկաստանի հայասէրներին, — լիքն քանի տարի մանկավարժութիւն էր ուսանում Գերմանիայում, — որպէս զի աւարտելուց յետոյ յանձն առնի գնալ Հայաստանի մի որ և իցէ հայաբնակ քաղաք և ուսուցչական դպրոցում ծառայէ: Գործից յետոյ պէտք է գնային մի 5-6 տարեկան պատանու երիտասարդներ նոյն անմիտանալի աղքատներ ծախսով: Բայց, արդ՛—տես՛, որ մարդս անսխալական չէ, հոգեղէն արարած է: Պ. Ս. Մանտենեանցը զարմ Տփլիսի իւր ծնողացը տեսութեան նպատակով, — յանկարծ իւր ջնհել տարիները ծանօթացրին մի ջնհել Հայ օրիորդի հետ, և այս անցարտաշնորհ քաղցրութիւնը գնահատելով և ամեն բանից վեր գտնելով, — ամուսնացաւ և այս քանի տարին Հայաստանի համար մի քանի գուտակ ընծայելով, վերջապէս միտեց այժմ անձամբ գնալ և այնտեղ ծառայել ազգին: Մենք պէտք է ամեն երիտասարդների արարմունքը ներդառնալով աջով նայինք և քննենք: — մենք էլ, — մեզանից ամեն մէկս ջնհելութիւն և զիմութիւն չառ ենք տրել, մուսանալով, անձանկան, ծնողական և ազգային պարտաւորութիւնները: Ասած է՝ « Իսկ ո՛չ ոք, քան ո՛չ երբէք »: Ասում եմ, թէ պէտք է Պ. Մ. Մանտենեանցը մի կողմից մինչև այժմ իւր ուղիղ պարտաւորութիւնը չէր կատարել այն անձի առաջ, որը բաւականին մեծ դուրս էր ծախս արել: Բայց պէտք է խոստովանել որ այս Ա-5 տարին նա անպըտուղ չանցկացրեց հայութեան համար: Նա տեսաւ էր Ներսիսեան դպրոցում, նորա շնորհաբեկ և դաստառութեամբն էր որ այժմ մի-10ը հաս ուսումնաւարտ երիտասարդներ ունենք, մանկավարժութիւնը թէ տեսականապէս և թէ գործնականապէս ուսած — Ներսիսեան դպրոցի 7- դասարանը այս տարի աւարտած: Պ. Ս. Մանտենեանցը ունի մի քանի և գրաւոր աշխատութիւններ մանկավարժութեան վերաբերեալ: այս բոլորիս ձեռքիս չունէի այդ գրութիւնները որ կարողանայի մի առ մի տնտեսել: Մի խօս-

Գաղով չափուն, որովք Գարազալ էֆէնալին օտարազգի քերթողաց տաղաչափութիւններն հայախօս ըրած է, պէտք է գիտնալ թէ փոխանակ նոյնայանգ և նոյնափանկ միջնադարեան չափուն՝ նախադասած է գործածել Հայկական ըսուած չափը: Գոր գիտնալու մեր Ծարախանայ հեռուգրութեամբ սկսան կենդանացընել Բաղատունիք, Հիւրմիւղեանք և Ալիշանք: Այսօր այդ չափով բաւական քաղցր և փութ տղեր սկսած եմք կարգաւ սակայն այդ տաղաչափութեան արհեստն և կանոններն ամենին յառաջադիմութիւն չեն ըրած, վրան զի գեռ հընար չէ եղած մեր վանկերուն դանադանութեանց բանալին գտնալ: Օրինակ մը ուղեւոր յիշատակել, կը գտնուի երբեմն որ միտման բառ մը ամբողջ քառափանկ անդամի մը պատմութիւններով, ինքնին մի անգամ կը կազմէ: Հնար է արդեօք ամեն միտմանից և ամեն ատեն այսպիսի անգամկազմել: Կարողանալ էֆէնալի տողերուն մէջ ալ այդպիսի դժուարութեան հետք կը նկատուին: Հընար չէ՛ արդեօք, այսպիսի աւելի-

քով տեսել ենք: և յոյս ունինք որ Պ. Ս. Մանտենեանցը տաղաչափուն չառ օգտակար պէտք է լինի Հայկական ուսումնաւորական գործին և հետևապէս ազգի օգտին: Սխալուած չէ այն արժանապատիւ անձը, որ Մանտենեանցի համար զըրամ է ծախսել և նորա ուսումնաւորութիւնը: Կենդանի լինիք և տեսնենք: Այժմ Պ. Մանտենեանցը այս միտքն օրից յետոյ գնալու է Տաճկական Հայաստանը ստորաւելու, Վան, Մուշ և Կարսի այցելելու, որպէս զի մի անգ ընտրել ուսուցչական դպրոց բանալու: Պ. Մանտենեանցի հետ գնալու է և մի երիտասարդ, որ արժանապիշատակ էֆէնալեանցի (Ներսիսեան դպրոցի բարեբարներէ մինն է) ծախսով 5-6 տարի Զիլիգերիայում և Գերմանիայում գիւղական տընտեսութիւն է ուսել: Այդ երիտասարդի ազգանունն է, կարծեմ, Նշան Մադաթեանց, որովհետեւ մի ուրիշ Մադաթեանց էլ կայ — սորա եղբայրը, որ նոյն պարտի ծախսով այժմ Գերմանիայում մանկավարժութիւն է սովորում: Պ. Նշանն էլ պէտք է բացուելիք վարժապետանալ: ցին կից երիտաւորական մասը բաց անէ նոյն իսկ ուսուցչական երկրի սովորացնելու իւր արհեստը: Յանկանանք կատարեալ յաջողութիւն այդ պարտններին, որով մի նոր կապ կը հաստատեն մեր և Ձեր մէջ և մեզ տւելի եռանդ ու աշխոյժ կը պատճառեն Ձեզ օգնութիւն հասցնելու ամեն կերպ: Մենք՝ Ռուսիայի Հայերս՝ առայժմ Ձեր վրայ ենք մտածում, Ձեր գործերով ենք զբաղուած, Ձեր յոյսով ենք ապրում, Ձեզ համար ծագած յոյսը — Հայաստանի վերակենդանութիւնը — մեր ամենօրուայ գիւրգիւտը և ցերեկուայ մտածմանց առարկան է դարձած: Ձեզ համար աշխատող այլազգիներին օրհնում ենք և յիմարներին անիծում: Ձեր բարեբարները՝ Կարապետի, Եֆիմիւրի ու միւսներին անունները փառաբանում: Իսկ մեզ զաղուում ենք Այդ զիտի կառավարութիւնը որ մի հասարակ բան չէ հասկանում և չէ ցանկանում օգուտ քաղել հանգամանքներից՝ Տաճկական Հայաստանի օգնելով — Ռուսիայի Հայերի սիրտը և հոգին զրաւել և նոցա ան իւր բարեկամ լինել: Ասուած, երկինք, գետինը, ծով, ցամաք, այս ճամբարն է ասածներս: Թո՛ղ ազնիւ Լէյտարտը այս լաւ հասկանալ և հասկանալի իւր կառավարութեանը, քանի որ ժամանակը իւրեանց ձեռին է: Եթէ ո՛չ, եթէ Ռուսաց կառավարութեան քաղաքականութիւնը փոխուեցաւ և վերջ տրուեցաւ նորա — աշխարհներ տիրելու սահմանին, և ցանկացաւ Ռուսիայի Հայաստանից մի ինքնակառավարական Հայաստան ստեղծել իւր հովանաւորութեան ներքոյ, — ինչպէս որ գրում են այժմ Ռուս մի երկու լրագրիւններում

ներէն օգուտ քաղելով չափաբանութեան կանոնները պարզել և հաստատել: Առանց ուղեւոր այդ յընդմիջութեան խորքը սուղանիլ կը յանձնեմք զայն մտադրութեանց չափաբանից և քերթողաց, և որովհետեւ հեռու երկիր գտնուողներուն ձայններին հասցնել դժուար է, խօսքերն իսկ կողմէր առանձինն յաղկաւարդի ներհուն և յաջողակ թարգմանչին: Մէկ խօսքով կարողանալ էֆէնալի ուղած է հետեւիլ այն շաւղին, յորում զանազան Միլիթարեան Հարք գեղեցիկ արդեւորքը սլայծաւացան: և թէպէտ ոմանք իւր լեզուն նուազ քաղցր գտնան քան ուրիշ թարգմանչաց լեզուն, այլ ես կարծեմ թէ ճշդութեան և մաքրութեան ձրից հետ բաւական քաղցրութեան և ներդաշնակութեան ձրքն ալ կը կըրէ: Գո՛նէ այնչափ՝ որչափ թարգմանութեանց մէջ ցուցնել հնարաւոր է:

ՏԻՐԱՅՐ

և ինչպէս մտածում են յառաջադիմ և ինտելիգենտ Ռուս լրագրողներ և որը անկասկած իրադրութեան է՝ վաղ թէ ուշ: այն ժամանակը մնաս բարե կ'անենք Անդրկովկասի էլ, իւր լուսաւոր կառավարութեան էլ և լոյր աշխարհին էլ: Թող լաւ հասկանան այս բանը: « Եւ չուստ, նա կուշտ » ուսում է հայ աւուծը: Ես եմ անկեղծ խօսողը և ճշմարտութիւն յայտնողը: Քանի որ Հայեր արտ խորքերում եղած գաղտնի յոյսը արտայայտուել և աշխարհել է, — պէտք է ասել՝ այդ յոյսը երբէք անհետացած չէ եղել Հայեր արտի միջից նորա ամենաթշուառ ժամանակները անգամ: և եթէ աղքատը չէ կարողացել դուրս հանել այդ զգացմունքը, — սրտաւոր այն է եղել, որ Հայը դուրս արտայայտելը ժամանակից վաղ է համարել և այն իւր առածի մտքով է կառավարել իրան, որ ասում է. « Երբեք չինելու փոխանակ, չը լինի թէ գաղտնիք ասելով՝ աչքն էլ փչացնեմ »: Կրկնում եմ, քանի որ Հայը նոր կեանք ձեռք բերելու նպատակով սկսում է մտածել, զործել և յաւատ, եթէ աշխարհիս երեսին մի Հայ մարդ միայն մնայ, այսու ամենայնիւ — նա չի կորցնելու իւր բոլոր անցեալ և ապագայ յոյսը: Մեր ազգը այսուհետեւ մեռնելու չէ: պէտք է տղեր և ձեռք բերէ՝ այն ինչ որ ցանկանում է և ինչ բանի որ զիմում է. գուցէ ուշ, բայց անպատճառ:

Ուղարկում եմ Ձեզ երկու յոյսածներ՝ մեր «Մեղուի» և միւսը «Մշակի» խմբագրիների զրոյց դուրս եկած և թողնում: Ձեր կարդացողներին այդ մասին հետեւողութիւն անելու: Իմ կողմից միայն այսօրու աւելացնելով թէ «Մշակի» Պ. խմբագրից չը պէտք է նեղանալ: դա մի տարօրինակ մարդ է և միայն իւր եզական կարծիքն է յայտնում, — որը մեզ ամենիս զգուշացնէ պատճառած վաղ ժամանակներից՝ Ձեզ վրայ այդպէս գծի պէս խօսելով: Այն ես դիտենք, որ այսօր յիշոցներ է տալիս, վաղը, հաւատացած եղեք, ոչնչանա պէտք է կարգաւ Ձեզ — ինչպէս արաւ նա Ներսէս Պարոնարքի վերաբերութեամբ: . . .

Երկու չարաթ է, ինչ ո՛չ Պ. Հայկալը և ո՛չ Պ. Արդամը թղթակցութիւններ չեն զրած Պոլսից: Ինձ համար, մասնաւորապէս, չառ ցանկալի էր, մի և նոյն ժամանակ ձեռնուտ, եթէ պատճառն ծոյլութիւն էր եղել և ո՛չ ուրիշ ու իցեբան: Եթէ այդ է, սրտիս մի զրգալ իւզ կը քսեմ: . . .

Նամակս արդէն վերջացած էի մի օր առաջ և արդէն մտածում էի թղթատարին յանձնել, ահա Ռուսական լրագրիւր հեռագիր բերաւ: չգիտեմք այդ հեռագրաւորը եւրոպացուց լրագրիւրներում ևս տալագրուեցա՞ւ, թէ ո՛չ—թող այդ մասին մեր սիրելի Պոլսի թղթակցները մեզ հաղորդեն: Ահա հեռագիրը՝

« 3 յուլիսի Պոլս: Հայոց Ազգային ժողովը իւր զանգիւղի նոտի մէջ 2 յուլիսի վճռեց զիսկ անախապէս մեծ տէրութեանց արտաքին գործոց նախարարներին պաշտօնապէս բողոքելով Ռուսիայից զաղթած Մուսուրմաններին Հայաստանում բնակեցնելու դէմ: Կազմել հանդիսաւոր դիմումն առ Եւրոպայ ընդդէմ Տաճկական կառավարութեան գործողութեանց ի Ձէյթուն և ի Մարաշ, ցոյց տալով որ Կուրը Զէյթունում հաստատել զինւորական նահանգապետի պաշտօն: Ազգային ժողովը վճռեց շնորհակալութիւն յայտնել Լորդ Կարնարվորթին այն մասին որ Անգլիական խորհրդարանի վերջին նիստերում նա արեւարտ պահանջում էր Հայաստանին խոտուացեալ բարեկորդութիւնների իրադրութիւն: » Այս հեռագիրը կարգալիս իմ մօտ էր մի Կոթնէլ ազգով Հայ, որը հնարեց թարգմանելու զուրեք հետեւեալ Տաճկական առածը՝ « Երբ փարիս, արիփարիս, . . . օրուն: » Այս բառերը թարգմանելուց յետոյ իմացայ նորա սրտի զգացմունքը, որովհետեւ Կոթնէլն ամուսնա-

ցած չէ, և իւր ամենաբաղքը և թանկագին ցանկութիւնը մեր ազգի համար աշխատողներին նուիրեց:

Ռուսական

Խորհրդի 7 յուլիս 1879: . . . Տնօրէն-խմբագիր Մասիս պատուական օրաթերթի:

Ս. Երուսաղեմի Միաբանութեան հոգեւորդ Տ. Սահակ վարդապետ խաղայեան քանի չաբաթ յառաջ հայրենեաց ի տեսութիւն Խորհրդեկած ըլլալով՝ Ն. Արժանապատուութիւնն ամուսնաւորութեան օրը վարժարանս այցելած ատեն հետը բերած էր 20ի չափ կարեւոր Դասագրքեր, զորս վարժարանին նուիրելէ յետոյ քաջալերեց ընկերութիւնը և իւր սաները քանի մ'աղդու և գեղեցիկ յորդորներով և մեկնեցաւ:

Այս առթիւ քաղցր պարտականութիւն մը կ'համարուի Ձեր աղգօգուտ թերթին միջոցաւ մեր հրապարակական շնորհակալութիւնը մատուցանել խաղայեան ուսեալ վարդապետին, որ իւր յառաջիմաստը ողբով կրնայ արդարեւ մի նախանձելի անուն ունենալ իւր կորցրել մէջ, ի բերկրութիւն հայրենակցաց և ի պարճանս երուսաղեմի Ս. Պատրիարք հօր, ուրուն շնորհները վայելած է կանխաւ ընկերութիւնն և Ն. Սրբապետութեան օրհնաբեր կոնդակաւ իսկ խորախոստած: Միւսմը . . .

Ի դիմաց Սմի. ընկ. Բ. Առնապետի Բ. Առնապետ Գաբէէն. Պ. Ն. Խաղաղութ. Մ. Թի-ճէնէն. Թի-Էլէն.

ՄԱՍՍՈՒՍ
ԳԱԲԵՂԻՆ ԷՖԷՆՏԵՍ ՄԻԼԻԲԵՆՆ
Իւր գրասենեակը փոխադրած է Պաղէ-Գարու Բաթմ-Փաշա խան թիւ 13 և 14 սենեակները, զոր կը ծանուցանէ ի դիմութիւն յաճախորդաց: 24

Ի Լ Ա Ն
Նիղամիյէ անպարը իշուն միւս պայեաննա լուղում կ'օրինեն էլլի պին. բիւլէ հանթէ Էմանընըն ալթուն երիզ զըզ հիսապը իլէ նիղամիյէ թահ-նիյէ անպարընա թէպիմ իլէ ալընա-ճաք մադաւուզ սէնէտիսին խաղինէի մալիյէյէ խաղաղ վէ իրայէսինտէն ի թիպարէն պիլինճի սիւլիսի երկրմի պիլ վէ իւչիւնճի սիւլիսի օթուզ պիլ կիւն միւրուրինտէ տէֆաթէն թէէտիյէ գըլընմադ վէ իչպու թէմնաղու բու մինին օթուզ պիլինճի սալը կիւնիւ գարարը գաթիսի վիլիլմէք շարթը իլէ միւնաքասա խոլլմէքտէ պուլուն տուղունտան, պուլուն ի թապընա թալիս օլանըրըն մալիյէ զաղինէյի ճէլիլսինտէ իշար նէղարէթը տայրէսինէ չիմտիտէն միւրամաաթ իլլէ մէլէրի: 26 թէմուզ 1879

Պապը Սէրասքէրի
Նիղամիյէ սէպըլէ քօմիսիօնը իշուն տօքսան պէշ սէնէսի աղօսմօս իսլ. թիստարնտան տօքսան ալթըն օնէնիս մարթը Նիհայէթինէ քասար պէհէր հաֆթա իկիլմի պէշէր պին գըլէսի թէպիմ օլունմաք վէ նըսֆը Նաբօլի վէ նըսֆը արիկէրի Մարսիլիանն օլարաք շուրուլթը մուգարբէսի իլէ միւսպայեա օլունաճաղը Էլիէլէ իլան օլունան սէքիգ երիզ պին քըլէ Բաթմալէզին պէհէր գըլէսի քըլէ փա-րայա թալիս Էօտէսինտէ օլուպ թէ մուզը բուլինին երկրմի սէքիլինճի ճաւա իլթէսի էլիւնիւ գարարը գա-

Թիսի վերլուծելիստէն, իմաստնա
Թալիս օլանդարն եւ վի մէջը իւրտէ
Տարի Շուրայի ասքերից կէլմէլերի
26 Թէմուզ 1879

Պապը Սէրասքերի

Նիզամիյէ երգսք անպարնա օն
պէշ պին դըլէտէն իկիրմի պէշ պին
դըլէյէ քատար մահփուզ նուսուսէ-
սի շուրուլը մուգարբէրէսի իլէ միւ-
պայեա օլունաճաք թրիլիա զէյլու-
նըն պէշէր դըլէսի իւշ զըշ օն փա-
րայա թալիսի կօհտէսիւնտէ օլուպ
թէմուզու ըլուսիլին օլուզուսնու բա-
զար իրթէսի կիւնիւ միւնաքասաք-
նըն ինքսաք իլէ քարարը դաթիսի վէ-
րիլէճէյիստէն, իմաստնա թալիս օ-
լանլարն եւ վի մէջը իւրտէ Տարի
Շուրայի ասքերից կէլմէլերի :

26 Թէմուզ 1879

Պապը Սէրասքերի

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿԱՌԻԹԻԻՆԲ

ԱՌԱՋՆՈՐԴ ԽՕՍԱԿՑՈՒԹԵԱՆ

ԱՆԳԼԻԵՐԵՆ ԼԵՁՈՒԻ

Աշխատանքային Մ. Պաշտասարեան
Հիւսնանց

Անգլիերէն լեզուին դիւրաւ ըն-
տելանալու և քիչ ատենի մէջ խօսիլ
սորիկու համար յարմարագոյն և մէկ
հատիկ դործի մը կրնայ համարուիլ
այս նոր գիրքը, որ 240 երեսէ բաղ-
կացեալ է և կը պարունակէ հետեւ-
եալները.

Մասն Ա. Բերականական կանոններ:
— Մասն Բ. Զրուցատրուածիւն :
— Մասն Գ. Անգլիերէնի յատուկ ոճեր:
— Մասն Դ. Համառօտ նամակներ :
— Մասն Ե. Համառօտ բառարան Հայե-
րենէ յԱնգլիերէն : — Մասն Զ. Համա-
ռօտ բառարան Անգլիերէնէ ի Հայերէն :

Արամեան տպարանէն 'ի լոյս ըն-
ծայուած այս գործը մաքուր տպագ-
րութեամբ և անգլիական կազմով
գեղեցիկ կերպիւ պատրաստուած
կը ծախուի ամեն գրաւաճառաց իւս-
նութիւնը 'ի գին 2 փրանք :



Օ Ճ Ա Ռ

Անուշահոտ օճառ, մորթը կը կա-
կուղցնէ ու լեղի շուրուլ ալ կը փըր-
կըրի, տեսակը իրիստ աղնի ու գիւ-
նը շատ աժան է. կը ծախուի 'ի
Պօլիս Ղալաթիա Միսնասեան և ընկե-
քաց Ամերիկայի մաղազան :



ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԱՂԱՋԱՆ

Կ. Պօլիս Ղալաթիա Միսնասեան և
ընկերաց Ամերիկայի Մաղազան կը
ծախուի, աղնի ճերմակ կտաւներ,
ու սեղանի ծածկոյ և այլն, սեղանի
արծաթած պատառաքաղ, դրդայ
և այլն. կազի Լամբաներ, սեղանի
ճերմակ յալմապակէ սպասք Անգ-
լիոյ տեսակէն, քարեօյաներ, փիքէ
ծածկոյ, քիւսնէ սովան և այլն, խո-
հանոցի վերաբերեալ անթիւնք, կա-
րի դործիքներ, և ուրիշ անթիւն պիւ-
տանի վաճառք կը ծախուին չափա-
ւոր քանակով :

ԽՐԱՎԴԻՐ—ՏՆՕՐԷՆ

Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐՈՅ

ՂԱՒԱԹԱ ՇՕՐՕ ԽԱՆ



ՇԻՐՔԵԹԻ ԽԱՅՐԻԷԻ ՇՈՒԵՆԱԻՆԵՐՈՒՆ ԵՐԹԵԻԵԿԻ ԺԱՄԵՐԸ

1879 ՅՈՒԼԻՍ 1 ԿԻՐԱԿԻ ՕՐԷՆ ՍԿՍԵԱԼ

ՄԻՆՁԵՆ ԾՈՒԼԻՍ 34

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ ԲԱՆՈՂ ՇՈՒԵՆԱԻՆԵՐԸ

Ժամ Բաճարէն Իմիւշ Զոհեմաները

14	Արնամուտքէյէն, Գուրուշ, Օրթաք, Պէշիկ.
14 15	Արնամ. վանիք, Չէնիկէյ, Պէշիկ. Գուրուշ, Գապաթ :
11	Ենիմ. Մէզարայ. Պէշիկէյ. Թարապ. Ենիք. Սթէն.
11	Պոյաճ. Բ. Հիսար, Պէշիկէյ, Արնամ. Գուր. Օրթաք. Պէշիկ :
11	Պէշիկէյ, Բաշապ. Գանի. Ա. Հիսար, Գանտ. վանիք, Չէնիկ.
11	Պէշիկ. Գուրուշ.
11 15	Ենիման. Մէզարայ. Պէշիկէյ. Թարապ. Ենիք. Լիւրիկ.
11	Բ. Հիսար, Պէշիկէյ, Արնամ. Գուրուշ, Օրթաք. Պէշիկէյ :
11 15	Բ. և Ա. Գապաթէն, Մէզարայ. Պէշիկէյ. Թարապ. Պէշիկէյ.
11	Բաշապ. Բ. Գ. մահ. Գանի. Ա. Հիսար, Գանտ. վանիք, Չէնիկ.
11	Պէշիկէյ. Պէշիկէյ. Գուրուշ. Գապաթ :
12 15	Ենիմ. Մէզարայ. Պէշիկէյ. Թարապ. Ենիք. Սթէն.
12	Պոյաճ. Բ. Հիսար, Պէշիկէյ, Արնամ. Գուր. Օրթաք. Պէշիկ :
4 15	Ենիման. Մէզարայ. Պէշիկէյ. Թար. Ենիք. Լիւրիկ. Պո- յաճ. Բ. Հիսար, Պէշիկէյ, Արնամ. Գուր. Օրթաք. Պէշիկ :
2	Պէշիկէյ. Թարապ. Պէշիկէյ. Բաշապ. Բ. Գ. մահ. Գանի.
3	Ա. Հիսար, Գանտ. վանիք, Չէնիկ. Պէշիկ. Գուրուշ, Գապաթ.
3	Ենիման. Մէզարայ. Պէշիկէյ. Թար. Ենիք. Սթէն. Լիւրիկ.
4 15	Պոյաճ. Բ. Հիսար, Պէշիկէյ, Արնամ. Գուր. Օրթաք. Պէշիկ :
3 15	Մէզարայ. Պէշիկէյ. Թար. Բաշապ. Բ. Գ. մահ. Գանի.
5 15	Ա. Հիսար, Գանտ. վանիք, Չէնիկ. Պէշիկ. Գուրուշ, Գապաթ :
5 15	Ենիմ. Մէզարայ. Պէշիկէյ. Թարապ. Ենիք. Լիւրիկ. Բ.
5	Հիսար, Արնամ. Օրթաք. Պէշիկ :
6 15	Ենիմ. Պէշիկէյ. Թարապ. Պէշիկէյ, Ենիք. Լիւրիկ. Գանի.
6	Բ. Հիսար, Գանտ. Արնամ. Չէնիկ. Պէշիկ. Օրթաք.
6	Գուր. Պէշիկ. Իսկիւտար :
7 30	Ենիման. Մէզարայ. Պէշիկէյ. Թարապ. Ենիք. Պոյաճ. Բ.
7	Հիսար, Արնամ. Օրթաք. Պէշիկ :
8	Ա. և Բ. Գապաթէն, Մէզարայ. Պէշիկէյ. Թար. Պէշիկէյ.
8	Ենիք. Լիւրիկ. Բ. Հիսար, Արնամ. Գուր. Օրթաք. Պէշիկ :
8	Պէշիկէյ. Թարապ. Պէշիկէյ, Բաշապ. Գանի. Ա. Հիսար,
9	Գանտ. վանիք, Չէնիկ. Պէշիկ. Գուրուշ.
9	Պէշիկէյ. Պէշիկէյ, Բաշապ. Բ. Գ. մահ. Գանի. Ա. Հիսար,
9 30	Գանտ. վանիք, Չէնիկ. Պէշիկ. Գուրուշ :
9 30	Ենիման. Մէզարայ. Պէշիկէյ. Թարապ. Ենիք. Սթէն. Պո- յաճ. Բ. Հիսար, Արնամ. Գուրուշ, Օրթաք. Պէշիկ :
10	Ենիման. Մէզարայ. Պէշիկէյ. Թարապ. Ենիք. Լիւրիկ.
10	Բ. Հիսար, Պէշիկէյ, Արնամ. Օրթաք. Պէշիկ, Գապաթ :
10 30	Ենիման. Մէզարայ. Պէշիկէյ. Թարապ. Ենիք. Պոյաճ.
10	Բ. Հիսար, Արնամ. Օրթաք. Պէշիկէյ, Գապաթ :
11	Մէզարայ. Պէշիկէյ. Թար. Ենիք. Լիւրիկ. Արնամ. Օրթաք.
11	Պէշիկ :

Կաճարէն Ենիւշ Զոհեմաները

12 15	Գապաթէն, Իսկ. Պէշիկ. Գուրուշ. Օրթաք. Պէշիկ. Չէնիկ.
12	Արնամ. Գանտ. Բ. Հիսար, Գանի. Լիւրիկ. Ենիք. Պէշիկ.
12	Պէշիկէյ, Թարապ. Պէշիկէյ. Մէզարայ. Ենիման :
1	Պէշիկէյ, Օրթաք. Գուր. Արնամ. Պէշիկէյ, Բ. Հիսար, Պո- յաճ. Ենիք. Թարապ. Պէշիկէյ. Մէզարայ.
2	Գապաթ. Պէշիկէյ. Օրթաք. Արնամ. Բ. Հիսար, Լիւրիկ.
2	Սթէնիա, Ենիք. Թարապ. Պէշիկէյ. Մէզարայ. Ենիման :
2	Իսկ. Գուրուշ, Պէշիկ. Չէնիկ. վանիք. Գանտ. Ա. Հիսար,
3	Գանի. Բ. Գ. մահ. Բաշապ. Պէշիկէյ. Մէզարայ. Պէշիկէյ.
3	Պէշիկէյ, Օրթաք. Արնամ. Պէշիկէյ, Բ. Հիսար, Պոյաճ.
4	Ենիք. Թարապ. Պէշիկէյ. Մէզարայ. Ենիման :
4	Պէշիկէյ. Օրթաք. Գուրուշ, Արնամ. Պէշիկէյ, Բ. Հիսար, Լիւրիկ.
4	Ենիք. Թարապ. Պէշիկէյ. Մէզարայ. Ենիման :
4	Իսկիւտար, Գուրուշ, Պէշիկէյ, Չէնիկէյ, վանիք, Գանտ, Ա.
5	Հիսար, Գանտ. Բ. Գ. մահ, Բաշապ, Պէշիկէյ, Պէշիկէյ.
5	Պէշիկէյ, Օրթաք. Արնամ. Պէշիկէյ, Բ. Հիսար, Լիւրիկէն,
6	Ենիքէյ, Թար. Պէշիկէյ. Մէզարայ. Բ. և Ա. Գապաթ :
6	Գապաթէն, Պէշիկ. Օրթաք. Արնամ. Գանտ. Բ. Հիսար,
6 15	Պոյաճ. Ենիք. Թարապ. Պէշիկէյ. Մէզարայ. Ենիման :
6 15	Իսկիւտար, Պէշիկ. Գուրուշ. Օրթաք. Պէշիկ. Չէնիկ. Ար- նամ. Գանտ. Բ. Հիսար, Պոյաճ. Ենիք. Թարապ. Պէշիկէյ.
8	Մէզարայ. Ենիման :
8	Պէշիկէյ, Օրթաք. Արնամ. Պէշիկէյ, Բ. Հիսար, Լիւրիկ. Ենիք.
9	Թարապ. Պէշիկէյ. Մէզարայ.
9 30	Գուրուշ. Պէշիկ. Չէնիկ. վանիք. Գանտ. Ա. Հիսար, Գանի.
10 30	Բաշապ. Պէշիկէյ, Պէշիկէյ, Մէզարայ. Գապաթէն :
10	Պէշիկէյ, Օրթաք. Գուր. Արնամ. Պէշիկէյ, Բ. Հիսար, Պո- յաճ. Սթէն. Ենիք. Թարապ. Պէշիկէյ. Մէզարայ. Են- իման :
11	Պէշիկէյ, Օրթաք. Գուրուշ. Արնամ. Պէշիկէյ, Բ. Հիսար,
11	Լիւրիկէն Ենիք. Թարապ. Պէշիկէյ. Ենիման :
11	Գուրուշ. Պէշիկ. Չէնիկէյ. վանիք. Գանտ. Ա. Հիսար,
11 35	Գանի. Բաշապ. Պէշիկէյ.
12	Պէշիկէյ, Օրթաք. Գուրուշ. Արնամ.

Ամեն ուրախ իրիկուն ժամը 10 1/2 Կին Պէշիկէյ շողեմաւ
մը պիտի ելնէ և Բաշապէն, Բ. Գապաթէն, Լիւրիկէն, Ա. Հի-
սար, Գանտ. Պէշիկ. Գուրուշ. Իսկ. հանգիւլեղով կամուրջ պիտի
իջնայ :

Լրագիրս ամեն օր կը հրատարակուի
բաց 'ի կիրակի և ամեն օրերէ :
Բաժանորդագրութեան տեղին է Ղա-
լաթիա Սանտրոգճըլար շատուսի թիւ
198, Նօրօ խան Մասիսի խմբագրատու-
նը : Իսկ գաւառաց մէջ հետեւեալ հոգա-
րարձուաց գրասենեակները .
ԶՄԻՒՆԻՒՄ. Ստեփանէ Գ. Տէպէնան.
Նիկիմիթի. Ստեփանէ Գ. Լիւրիկէն.
ՊՐՈՒՍԱ. Ստեփանէ Գ. Թանկէրեան.
ՌՈՏՈՍԹ. Արթ. Տ. Արիստակէս ա-
ւադ քահանայ Ֆէպէնան.
ԱՐԻՒՄ. ՆՈՒՊՈՒՄ.
ՍԱՄՍՈՒՆ.
ՏՐԱՊԻՉՈՒՆ. Ս. Էթմէլէնէն Էթէնի.
ՍԱՄԱՒԻՍ.
ՍԵՐԱՍՏԻՍ. Նազարէթ Էթ. Յ. Իս-
թամուլլեանց.
ԵԻՊԻՒՄ.
ԳԱՐԵՆԵՐԻ և ՏԵՐՍԻՄ. Կիրակոս Էթ.
Ս. Ղալաթէն.
ԵՐԶՆԻՍ. Թադէոս Էթ. Բաղրատուէ.
ԿԱՐԻՆ. Կարապետ » Զաքարեան.
ՄՈՒՇ. Միւսիլ » Փօթիկեան.
ՎԱՆ.
ԲԵՐԻՍ. Սեդրակ » Խարաճեան.
ՏԻԳՐԱՆՈՒԿԵՐՏ. Թադէոս Էթ. Թա-
ճեան.
ԵՐԵՍԻՍ. Գէորգ Էթ. Ոսկերչեան.
ՄԱՐԱՇ.
ՅՕԳՇԱՆ. Ֆէրհատ աղա Ս. Ֆէրհատ-
եան.
ՏՓԻՍ. Պ. Նիկողայոս Տ. Ղալաթէն.
ԿԱՒԱՍՏ. Պապուս աղա Հէլմեան.

ԻԻՍԿԻՏԱՐ ԲԱՆՈՂ ՇՈՒԵՆԱԻՆԵՐԸ

Ժամ	Ժամ	Ժամ	Ժամ
11	6 15	11 30	
11 30	7	11 45	7
12	8 15	12 15	8
12 30	8 35	12 45	8 30
1	9 15	1 15	9
1 25	9 35	1 40	9 30
2	10	2 15	9 50
2 30	10 25	2 45	10 10
2 55	10 45	3 10	10 35
3 30	11 5	3 45	11
4	11 25	4 15	11 20
4 30	11 40	4 40	11 40
5 5	12	5 15	11 50
5 45		6 10	12 5

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ

Ժամ	Ժամ	Ժամ	Ժամ
11 30	5 25	11 30	5 25
12	6	12	6
12 30	6 35	12 30	6 25
1	8	1	8
1 30	8 40	1 30	8 45
2	9 20	2	9 20
2 30	10	2 30	10
3 5	10 30	3 5	10 30
3 45	11	3 45	11 5
4 30	11 30	4 30	11 35
5	12	5	12 5